



**Օրհուս կենտրոնների 2012թ.**

**կատարած աշխատանքների տարեկան  
հաշվետվություն**

Օրիու կենտրոնների 2012թ. աշխատանքները համակարգվել են «ԲԼԵՋԱՆ» Բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ի կողմից՝ «Աջակցություն Օրիուսի Կոնվենցիայի իրականացմանը, Օրիու կենտրոնների և բնապահպանական քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների ձևավորմանն ու ուժեղացմանը» ծրագրի շրջանակներում:

Կենտրոնների համակարգողների անմիջական մասնակցությամբ տարվա սկզբին մշակվել է ՀՀ Օրիու կենտրոնների գործունեության ուղղությունների և իրականացվելիք մեթոդների ցանկը, որի հիման վրա կենտրոնները կազմել են իրենց տարեկան աշխատանքային ծրագրերը: Այդ ծրագրերը քննարկվել և հաստատվել են կենտրոնների փորձագետների խորհրդի կողմից, որոնց համապատասխան էլ կազմակերպվել են կենտրոնների աշխատանքները:

*2012թ. Օրիու կենտրոնների գործունեությունն հիմնականում նպատակաուղղված է եղել հանրությանը բնապահպանական խնդիրների և առողջ ու բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրենց իրավունքի մասին իրազեկմանը, վերջիններիս այդ խնդիրների լուծման գործընթացին ավելի արդյունավետ ներգրավմանը, շրջակա միջավայրի վերաբերյալ ընդունվող որոշումների օրինականությանը նպաստելուն, դրանց ընդունմանը հասարակության մասնակցության և պետական մարմինների հաշվետվողականության ու թափանցիկ գործելաոճի ապահովմանը աջակցելուն:*

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի տասնհինգ Օրիու կենտրոնների կողմից տեղեկատվություն ստանալու 146 հարցումներ են ուղղել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Հարցումները և ստացված պատասխանները վերլուծվել են, տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, տեղադրվել Օրիու կենտրոնների կայքում, տարածվել են սոց-ցանցերի, էլեկտրոնային ցանցերի միջոցով, ինչպես նաև տպագիր և այլ տարբերակներով, այդ կերպ հասանելի դարձնելով հասարակության առավել լայն շերտերի համար՝ այսպիսով նպաստելով Օրիուսի կոնվենցիայի առաջին դրույթի իրականացմանը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը:

Կենտրոնները իրականացրել են նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վերաբերյալ տվյալների հավաքագրում և խմբավորում ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջուր, թափոն և այլն), այդ տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային բազաներ, որոնք պարբերաբար թարմացվել են: Առկա տեղեկատվությունը տրամադրվել է հանրությանը ըստ պահանջի:

2012թ. առաջին կեսին ՕԿ-ների կողմից իրականացվեց բնապահպանական տեղեկատվության պահանջարկի ուսումնասիրություն՝ բնապահպանական տեղեկատվության հավանական սպառողների շրջանում, որը նպատակ ուներ բացահայտելու հասարակության տեղեկացվածության աստիճանը բնապահպանական խնդիրների նկատմամբ, գնահատելու նրանց կողմից ստացված տեղեկատվության հավաստիությունը, օպերատիվությունը, ինչպես նաև բացահայտելու ու պարզաբանելու մեր երկրում

բնապահպանական գործունեությանն առնչվող մի շարք այլ հարցեր: Փորձագետի աջակցությամբ կազմված հարցաշարերի օգնությամբ իրականացվեցին հարցումներ տարբեր սեռերի և տարիքային խմբերի, տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց շրջանում (ընդհանուր առմամբ 769 մարդ, այդ թվում՝ 65.1% իգական սեռի, 30.7% արական սեռի նարկեյացուցիչներ, հարցվածների 4.2 %-ն էլ սեռը չի նշել): Այս գործընթացը նպաստեց կենտրոնների կողմից մատուցված ծառայությունների ուղիների բարելավմանը, բնապահպանական տեղեկատվության հասանելիության առավել հեշտացմանը: Հարցումների արդյունքներից նաև ամփոփվել են կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ հարցվածների առաջարկությունները, որոնցից որոշները հաշվի են առնվել տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում, հետագա գործունեության ընթացքում նույնպես կենտրոնները կուղղորդվեն դրանցով: Հարցվածների 45,1%-ը լավատեղյակ են եղել Օրիուսի կոնվենցիայից, 36,9%-ը միայն լսել են 17,9%-ը տեղյակ չեն, իսկ Օրիուս կենտրոնների գործունեությունից լավատեղյակ են 55,7%-ը, 29,0%-ը միայն լսել են այդ մասին, իսկ 14,3%-ը տեղյակ չեն:

#### [Հարցումների մասին մանրամասն ներկայացված է կայքում:](#)

Շրջակա միջավայրին առնչվող խնդիրների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն տրամադրելու, հանրությանը այդ տեղեկատվությունը առավել մատչելի դարձնելու նպատակով կենտրոնների նախաձեռնությամբ պատրաստվում են թեմատիկ տեղեկատվական նյութեր, մամլո հաղորդագրություններ, որոնք [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի, այլ տեղեկատվական կայքերի և սոց-ցանցերի միջոցով տարածվում են հանրության շրջանում: Կազմակերպվում են նաև բնապահպանական մտածելակերպ ու վարքագիծ ձևավորող և զարգացնող, ինչպես նաև բնապահպանական խնդիրների շուրջ իրազեկության մակարդակը բարձրացնող դասընթացներ:

2012թ. ընթացքում ՕԿ-ների կողմից կազմակերպվել է իրազեկմանն ուղղված ընդհանուր թվով **253** միջոցառում, այդ թվում՝ **70** մամլո ասուլիս:

ՕԿ-ները շահագրգիռ հասարակությանը տեղեկացնում են շրջակա միջավայրի հարցերի շուրջ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի և էկոլոգիական փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կայանալիք հասարակական լուսմների մասին (հնարավորության դեպքում նախագծին նախապես ծանոթանալու հնարավորություն է ընձեռնվում) և աջակցում են լիազոր մարմնին հասարակական լուսմների կազմակերպմանը՝ նպաստելով հանրության մասնակցությանը շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին:

2012թ. կենտրոնների նախաձեռնությամբ տարբեր բնապահպանական խնդիրների շուրջ, շահագրգիռ հասարակության, պետական, միջազգային, գիտական հասարակական կառույցների ներգրավմամբ իրականացվել է **90** հանրային քննարկում, կենտրոնները համագործակցելով պետական լիազոր մարմնի հետ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել և հասարակության մասնակցության ապահովման հարցերով աջակցել են ընդհանուր թվով **20** հանրային լուսմների:

Այս միջոցառումները էականորեն նպաստել են որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության ապահովմանը, շրջակա միջավայրի հարցերի կառավարման քարտեզավման գործընթացին՝ խթանելով թափանցիկությունը և ժողովրդավարությունը:

Կենտրոնների գործունեության ուղղություններում միշտ կարևոր տեղ է հատկացվում էկոկրթության և էկոդաստիարակության խնդիրներին: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս կենտրոնները անմասն չեն մնացել էկոկրթությանն ուղղված միջոցառումներից, որոնք կազմել են ընդհանուր թվով **212** միջոցառում:

Արդարադատության մատչելիության ուղղությամբ իրականացված միջոցառումները միշտ զիջում են մնացած միջոցառումներին, այս տարի դրանք կազմել են ընդամենը՝ **15**:

2012թ. Հայաստանի 15 Օրիուս կենտրոնների կողմից իրականացվել է ընդհանուր թվով՝ **590** միջոցառում, որին մասնակցել է **13 062** մարդ, որոնցից **6724**-ը՝ կին, իսկ **6338**-ը՝ տղամարդ:

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոններ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու, ինչպես նաև մնացած ծառայություններից օգտվել է **4833** մարդ:

Ընդհանուր թվով միջոցառումների մասնակիցների և ծառայություններից օգտվողները կազմել են **17 895** մարդ:

[Տեղի ունեցած միջոցառումների, դրանց ուղղվածության, մասնակիցների քանակի, ծառայություններից օգտվողների մասին քստ կենտրոնների բերված է կից աղյուսակում:](#)

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Օրիուս կենտրոնում տեղի է ունեցել ՕԿ-ների համակարգողների **5** աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում հիմնականում հստակեցվել են գործունեությունների ուղղությունները, քննարկվել են տարեկան աշխատանքային պլանների ձևաչափերը և այլ կազմակերպչական հարցեր, ինչպես նաև հրավիրվել են տարբեր բնագավառների փորձագետներ, որոնց կողմից անցկացվել են ուսուցողական դասընթացներ կենտրոնների համակարգողների համար:

Ստորև ներկայացվում է ՕԿ-ների համակարգողների և մարզային ՕԿ-ների շահառուների համար իրականացված դասընթացների ցանկը.

	Դասընթացի անվանում	Մասնակիցներ	Դասընթացավար
1	Բնապահպանական տեղեկատվության	ՀՀ Օրիուս կենտրոնների համակարգողներ	<i>Յուրի Պողոսյան-ՀՀ պետական վիճակագրական ծառայության խորհրդի անդամ, շրջակա</i>

	հասանելիության խնդիրները ՀՀ-ում սպառողների պահանջարկը		<i>միջավայրի հարցերով միջազգային փորձագետ</i>
2	Աղտոտիչների արտանետումների և տեղափոխման ռեգիստրի մասին (ԱՍՏՌ) արձանագրություն	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	<i>Նաիրա Մանդայան- SS փորձագետ, Օրհուս կենտրոնների կայքի ադմինիստրատոր</i>
3	Տեղեկատվական բազաների ստեղծում Access ծրագրի օգնությամբ	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	<i>Նաիրա Մանդայան- SS փորձագետ, Օրհուս կենտրոնների կայքի ադմինիստրատոր</i>
4	Շրջակա միջավայրի մոնիտորինգի իրականացումը և դրա հետ կապված տեղեկատվության կառավարման համակարգերը	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	Սեյրան Սինապյան- ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն, փորձագետ
5	«Բնապահպանական կառավարման տնտեսական մեխանիզմներ և վերջին զարգացումները»	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	Էրիկ Գրիգորյան-բնապահպան-տնտեսագետ
6	Ասիական զարգացման բանկի գործունեությունը Հայաստանում	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	Սիլվա Ադամյան-Էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող, բնապահպան-փորձագետ
7	Բնապահպանական քաղաքականության զարգացումները ՀՀ-ում	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	<i>Այսեր Ղազարյան, ԳՄՀՀ ԿԿԿ փորձագետ (GIZ-Sustainable Management of Biodiversity Expert)</i>
8	Կլիմայի փոփոխության հետևանքները, համաշխարհային զարգացումները, Դոհայից հետո	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	<i>Արամ Գաբրիելյան, Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ազգային համակարգող</i>

9	ՏԻՄ-հասարակություն, համագործակցության ուղիները	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ՏԻՄ-երի վարչության պետ
10	«Հայաստանում շրջակա միջավայրի և էներգետիկ պաշարների նկատմամբ վարվող քաղաքականություն. հնարավորություններ և մարտահրավերներ»	ՀՀ Օրհուս կենտրոնների համակարգողներ, ՀԿ ներկայացուցիչներ	<i>Ֆրիդրիխ Նաումանի անվան հանուն Ազատության հիմնադրամ</i>
11- 20	«Քաղաքացիական հասարակությունը և էկոլոգիական իրավունքը» և «Շրջակա միջավայրի կառավարում»	Գորիսի, Կապանի, Դիլիջանի, Իջևանի, Ապարանի, Ստեփանավանի, Վանաձորի, Գյումրու, Եղեգնաձորի, Հրազդանի Օրհուս կենտրոնների շահառուներ	Արթուր Գրիգորյան- Օրհուս կենտրոնների իրավախորհրդատու, էկոլոգիական իրավունքի մասնագետ, ակտիվիստ

ՕԿ-ները ակտիվ համագործակցում են ՏԻՄ-երի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչ պետական կառույցների, գիտական, բիզնես և ԶԼՄ սեկտորի ներկայացուցիչների հետ: Կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, կենտրոնների համակարգողները մասնակցում են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև տրամադրում են տարածք և կազմակերպչական հարցերով աջակցում են այլ կազմակերպությունների կողմից կենտրոններում իրականացվող միջոցառումներին: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնները տրամադրել են տարածք **93** անգամ և մասնակցել են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված **252** միջոցառումների:

ՕԿ-ները էլ. և սոցիալական ցանցերով մշտական շփման մեջ են վերոնշյալ կազմակերպությունների և միմյանց հետ: Տեղեկատվությունը փոխանակման և տարածման աղբյուր են հանդիսանում [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքը և ՕԿ-ների էլեկտրոնային ցանցերը: Այս միջոցներով տրամադրվում է ֆորում ցանցերից օգտվողների համար:

Հաշվետու ժամանաշրջանում կենտրոնների՝ [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքից օգտվողների թիվը կազմել է շուրջ **300000** այցելու:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս սերտ է եղել ՕԿ-ների և ՁԼՄ-ների միջև կապը: ՕԿ-ների գործունեությունը լուսաբանվել են հանրապետական և մարզային բազմաթիվ լրատվամիջոցներով: Կենտրոնների համակարգողները հրավիրվել են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հեռուստա-ռադիո հաղորդումների, եղել են բազմաթիվ հարցազրույցներ և մամլո ասուլիսներ: Հանրային ռադիոն անվճար եթեր է հեռարձակում ՕԿ-ների հայտարարությունները: ՕԿ-ների գործունեությունների և վերջիններիս կողմից բարձրացված էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ բազմաթիվ ռեպորտաժներ են պատրաստվել և եթեր են հեռարձակվել հանրապետական և մարզային մի շարք հեռուստաալիքներով, ինչպես նաև լուսաբանվել են մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներում (ավելի քան **850** հոդված):

### **2012թ. արդյունքները.**

1. 2012թ. Հայաստանի Օրհուս կենտրոնների գործունեության արդյունքում, շրջակա միջավայրի պահպանության գործընթացին ներառվել է ընդհանուր թվով **17 895** մարդ:
2. Ակտիվացվել և նոր մակարդակի վրա են դրվել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում փոխհարաբերությունները և համագործակցությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝
  - Կենտրոնները անմիջական մասնակցություն են ունեցել համայքների 2013-2016թթ. զարգացման քառամյա ծրագրերի քննարկմանը և կատարվել են առաջարկություններ բնապահպանական և քաղաքաշինական մասերի վերաբերյալ, որոնց մի մասը ընդունվել և տեղ են գտել այդ ծրագրերում:
  - Ստորագրվել է համագործակցության հուշագիր Գյումրու քաղաքապետարանի և Գյումրու Օրհուս կենտրոնի միջև:
  - Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի մարզերում իրականացվող «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում, համապատասխան ՕԿ-ների միջոցով, ապահովվել է ՏԻՄ և քաղաքացիական հասարակություն կապը, որը խթան է հանդիսացել մասնակցային ռազմավարական պլանավորմանը, քաղաքացիական ակտիվությանը և շահերի պաշտպանությանը:
  - Ալավերդու ՕԿ-ի նախաձեռնությամբ համայնքի բնակիչներն ասնակցությամբ քննարկվել է համայնքի 2013թ. բյուջեի բնապահպանական մասը, հնչեցված առաջարկությունների մեծ մասն ընունվել է ՏԻՄ-ի կողմից:

- Գավառի ՕԿ-ը համագործակցելով ՀՀ և մարզի ՀԿ-րի հետ այցելել են ավելի քան 40 համայնք, հանդիպել ՏԻՄ ներկայացուցիչների և բնակիչների հետ, որի արդյունքում Սևանա լճի ափամերձ համայնքների ներկայացուցիչներին ներկայացվել է Սևանա լճի համալիր ծրագիրը, պարզվել հասարակության մասնակցության աստիճանը այդ ծրագրերի կազմման և իրականացման գործում, և հավաքագրելով առաջարկություններ է ներկայացվել ՀՀ Սևանա լճի հարցերի հանձնաժողով:
- Այս տարի առաջին անգամ ձևավորվել է Երևանի քաղաքապետարանին կից էկոլոգիական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են մի շարք ՀԿ-ներ, գիտական և այլ կազմակերպություններ, որոնց թվում է նաև Երևանի Օրիուս կենտրոնը: Հանձնաժողովի աշխատանքները նպաստում են ՏԻՄ-ի և հասարակական կառույցների միջև փոխհամագործակցությանը: Կենտրոնի կողմից հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում հանրությանն հուզող հարցերը:
- Ընթացիկ տարվա ընթացքում Դիլիջանի ՕԿ-ի կողմից տարաբնույթ միջոցառումներ կազմակերպումը նպաստել են տարեվերջում համայնքի ակտիվ քաղաքացիներին համախմբելուն և ընդհանուր առաջարկությունների փաթեթի ներկայացմանը Դիլիջան քաղաքի քառամյա ծրագրի նախագծում քնարկելու համար:

3. Օպերատիվ արձագանքվել է բնակիչների բողոք դիմումներին և բնապահպանական իրավախախտումների վերաբերյալ տեղեկացվել է պատկան մարմիններին.

- Գյումրու Օրիուս կենտրոնի դիմումների արդյունքում Բնապահպանական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժինը իրականացրել է ծառահատման դեպքերի 6 բացահայտում:
- Երևանի Նորագավիթ թաղամասի բնակիչների դիմում-բողոքների հիման վրա, Երևանի ՕԿ-ի և էկոլոգիական հասարակական դաշինքի ջանքերով կասեցվել է մարզադաշտի կառուցումը, որը նախատեսվում էր իրականացնել շուրջ 10 հա կանաչ տարածքի հաշվին:
- Կապանի ՕԿ-ի և Կապանի ՀԿ-ների կողմից իրականացված աշխատանքների արդյունքում, կասեցվեց «ԲԱՄՈ Մեթալ» ընկերության կողմից Կապան քաղաքի խմելու ջրի ջրահավաք ավազանում գտնվող ոսկու հանքավայրի որոնողահետախուզական աշխատանքների սկսման հետևանքով Կապանի խմելու ջրի աղտոտման վտանգը:
- Գորիսի ՕԿ-ի կողմից կատարված առաջարկությունները՝ անտառային հրդեհների կանխարգելման միջոցառումների վերաբերյալ ընդունվել է ԱԻՆ կողմից:



- Վանաձորի թափոնակուտակիչում ջրի և հողի նմուշների ուսումնասիրություններ իրականացվել Վանաձորի ՕԿ-ի կողմից, արդյունքների մասին իրազեկվել է հանրությանը:
- Ապարանի ՕԿ-ը Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համատեղ մի քանի ուսումնասիրություններ է իրականացրել՝ մոնիթորինգ՝ հողի, ջրի նմուշառումներ Քուչակի ժամկետանց պեստիցիդների պահեստի և Մելիքյուղի <<Թուխմանուկի>> ոսկու հանքավայրի պոչամբարի տարածքներում:

4. ՕԿ-ները աջակցել և մասնակցել բնապահպանական ուղղվածության քաղաքացիական նախաձեռնությունների գործունեությանը.

- Հայաստանի ՕԿ-ները իրենց ակտիվ մասնակցությունը, աջակցությունը և գորակցությունը ցուցաբերեցին Երևանի Մաշտոցի պողոտային հարող զբոսայգու տարածքում անօրինական կառուցապատման դեմ ընթացող շարժմանը և շարժման մասնակից ակտիվիստներին: Քաղաքացիական հասարակության եռամսյա պայքարի արդյունքում, Երևանի քաղաքապետարանը կրպակները ապամոնտաժելու որոշում ընդունեց:
- Հրազդանի Օրհուս կենտրոնը «Առողջ Հրազդան խումբ» քաղաքացիական նախաձեռնության հետ միասին նամակ-առաջարկ է հղել ՀՀ Վարչապետին, ՀՀ Հանրային խորհրդին, որտեղ առաջարկել է մշակել հայեցակարգ, որն առկա ռեսուրսներին, զարգացման հեռանկարներին ու բնապահպանական խնդիրներին համահունչ համակողմանի կհամակարգի Հայաստանի բոլոր տարածաշրջանները: Հանրային խորհուրդը նամակը ներկայացրել է ՀՀ նախագահին, ով հավանություն է տվել առաջարկին:
- Արարատի ՕԿ-ի նախաձեռնությամբ, մի շարք շահագրգիռ կազմակերպությունների և ակտիվ քաղաքացիների կողմից ստեղծվել է «Միասին՝ դեպի կանաչ Արարատ» քաղաքացիական նախաձեռնությունը, որը ակտիվ գործունեություն է ծավալում մարզի բնապահպանական հիմնախնդիրների վերհանման, հասարակության իրազեկության մակարդակի բարձրացման և լուծման ուղիների որոնման գործում:

5. ՕԿ-ների միջոցով ապահովվել է հասարակության մասնակցությունը մի շարք նորմատիվ իրավական ակտերի և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի վերաբերյալ հասարակական լուսմներին.

- Կենտրոնները շահագրգիռ կողմերի միջև տարածել են նախագծերը և կայանալիք լուսմների մասին հայտարարությունները, որոշ նախագծերի վերաբերյալ, մինչև լուսմները կենտրոններում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ, ոլորտի մասնագետների և փորձագետների ներգրավմամբ, վերջիններիս կողմից կատարված բոլոր առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները ներկայացվել են որոշում կայացնող մարմինն և դրանց գերակշիռ մասն ընդունվել է:
- Իջևանի ՕԿ-ի կողմից իրականացված իրազեկման աշխատանքների և ակտիվ քաղաքացիական հասարակության ջանքերի արդյունքում, Ադստեի գետի Պաղտուր վտակի վրա «Մեգաէներջի» ՍՊԸ կողմից «Խաչաղբյուր-2» փոքր ՀԷԿ-ի կառուցման ՇՄԱԳ նախագծի դրական փորձաքննությունը չեղյալ համարվեց, արդյունքում նոր նախագիծ ներկայացվեց փորձաքննության, որի առաջին լուսմների ժամանակ իրազեկ համայնքի բնակիչները միակողմ դեմ արտահայտվեցին:
- Եղեգնաձորի ՕԿ-ի կողմից ուղարկված արձագանքի արդյունքում «Գնդևանք» ՓՀԷԿ-ի նախագծային փաստաթղթերի հաստատման համար հայտարարված հասարակական լուսմները Բնապահպանության նախարարության կողմից ճանաչվեցին չկայացած: Օրհուսի կոնվենցիայի դրույթները չպահպանելու համար նշանակվեցին նոր հասարակական լուսմներ:
- Ձորագետ գետի վրա «Ստեփանավան-1» փոքր ՀԷԿ-ի նախագծի բացասական հետևանքների վերաբերյալ Ստեփանավան ՕԿ-ի կողմից իրականացված իրազեկման աշխատանքների և կենտրոնի կողմից պետական մարմիններին ուղղված բազմաթիվ դիմումների և բողոքների արդյունքում ՀԷԿ-ի կառուցման հարցը հասարակական մեծ հնչեղություն է ստացել: ՀԷԿ-ի վերաբերյալ դեռ վերջնական որոշում չի ընդունվել, հարցը դեռ քննարկման փուլում է գտնվում:
- Նախատեսվող գործունեությունների բացասական հետևանքների վերաբերյալ, համապատասխան համայնքների բնակիչների համար իրազեկման աշխատանքներ են իրականացվել Հրազդանի (Թեժ սարի նեֆելինային սիենիտների, Երկաթի հանք, Մեղրաձորի ոսկու հանքավայրեր), Ապարանի

(Թուխմանուկի ոսկու հանքավայր), Գավառի(Սոթքի), Եղեգնաձոր ( «Ջերմուկ 1» ՓՀԷԿ) և այլն:

6. Կապանի ՕԿ-ն , Կապանի ՀԿ-ների հետ դիմել են ՀՀ նախագահին ուրանի հանքավայրի որոնողահետախուզական աշխատանքները դադարեցնելու և ոլորտին առնչվող իրավական ակտերը չեղյալ համարելու պահանջով:
7. ՕԿ-ների աջակցությամբ մի քանի համայնքներում շրջակա միջավայրի պահպանության հասարակական դաշինքները ոչ միայն ակտիվ գործել են, այլև՝ ընդլայնվել,
8. Միջազգային հանդիպումներում Հայաստանի ՕԿ-ների փորձը գնահատվում է որպես առաջավոր.
  - 2012թ. Գյումրու ՕԿ-ի համակարգողի կողմից մի շարք միջազգային հանդիպումների ժամանակ քայլեր է ձեռնարկվել ՕԿ-ների փորձի ու գործունեության արդյունքների տարածման և միջազգային կապերի հաստատման ուղղությամբ
  - Թուրքմենիայի նորաբաց Օրհուս կենտրոնի համակարգողը այցելել է Հայաստան, ՕԿ-ների փորձը ուսումնասիրելու նպատակով:
9. Բարձրացել է բնապահպանական հիմնախնդիրների քննարկումներին քաղաքացիական հասարակության մասնակցության և հատկապես երիտասարդների ակտիվության մակարդակը:
  - Դիլիջանի և Եղվարդի ՕԿ-ները հանդիսանում են խորհրդատվական մարմին տարածաշրջանի երիտասարդների համար՝ իրենց ծրագրերի իրականացման և նոր գաղափարների ի հայտ բերման գործընթացում
  - Եղվարդի ՕԿ-ի գործունեության արդյունքում, Եղվարդում իրենց իրավունքների և շրջակա միջավայրի հարցերի մասին առավել քաջատեղյակ երիտասարդների ակտիվ խումբ է ձևավորվել, որոնց թիվը գնալով էլ ավելի շատանում է՝ համալրվելով ավելի ակտիվ, բանիմաց երիտասարդներով:
10. Կենտրոնների կողմից 2012թ. կատարած աշխատանքների ամփոփ հաշվետվությունները տեղադրված են կենտրոնների կայք էջերում ([www.aarhus.am](http://www.aarhus.am) կայք, “Օրհուս կենտրոններ”, “Կենտրոնի գործունեություն”):